

Հայ ժողովրդի պատմության ժամանակագրություն

1945 հունվար 12 Երևանում բացվում է Հայաստանի կոմպոզիտորների առաջին համագումարը:

մարտ 6 ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը՝ Խորհրդային Միության հերոս, գվարդիայի փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանին «Ոսկե Աստղ» երկրորդ շքանշանով պարգևատրելու և, որպես ԽՍՀՄ կրկնակի հերոս, նրա բրոնզե կիսանդրին ծննդավայրում կանգնեցնելու

ապրիլ 29 89-րդ հայկական Թամանյան դիվիզիան մասնակցում է Բեռլինի փողոցային համառ մարտերին:

մայիս 9 1941-1945 թվականների Հայրենական մեծ պատերազմում խորհրդային ժողովրդի տարած հաղթանակի օրը:

օգոստոս 27 Երևանում բացվում է Հայաստանի խորհրդային նկարիչների միության առաջին համագումարը:

հոկտեմբեր 1 Երևանում բացվեցին գեղարվեստաթատերական և ֆիզկուլտուրայի ինստիտուտները:

նոյեմբեր 21 ԽՍՀՄ ժողկոմխորհրդի որոշումը արտասահմանյան հայերի հայրենադարձություն կազմակերպելու մասին:

նոյեմբեր 25 Տեղի է ունենում Հաղթանակի կամուրջի հանդիսավոր բացումը Երևանում:

1946 հունվար 8 Վախճանվեց հայ նշանավոր դերասան Գրիգոր Ավետյանը: (Ծնվ. 1870թ.-ին):

մարտ 18 ԽՍՀՄ Գերագույն խորհրդի սեսիան ընդունում է «Օրենք ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման հնգամյա պլանի (1946-1950) մասին»:

մարտ 27 ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի և ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարիատները ՀԽՍՀ մինիստրությունների վերակազմելու մասին:

մայիս 15 Երևանում մահացավ ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Գրիգոր Ավետյանը: (Ծնվ. 1870թ.-ին):

հուլիս 2 Արտասահմանից ներգաղթող հայերի առաջին խմբի ժամանումը Խորհրդային Հայաստան:

հուլիս 30 ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նիստը հաստատում է «Օրենք ՀԽՍՀ ժողովրդական տնտեսության վերականգնման ու զարգացման 1946-1950 թվականների հնգամյա

ծրագրի մասին»:

սեպտեմբեր 25 Բացվում է Հայաստանի խորհրդային գրողների երկրորդ համագումարը: Երրորդ համագումարը կայացել է 1954 թ.-ին, չորրորդը՝ 1959 թ.-ին և հինգերորդը՝ 1966 թ.-ին:

հոկտեմբեր 5 Հայ մեծ լուսավորիչ Խ. Աբովյանի արձանի հանդիսավոր բացումը Քանաքեռում:

1947 հունվար 4 Վախճանվեց ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Ստեփան Լիսիցյանը: (Ծնվ. 1865թ.-ին):

փետրվար 9 Տեղի է ունենում Հայկական ԽՍՀ երկրորդ գումարման Գերագույն խորհրդի ընտրությունները:

ապրիլ 30 ԱՄՆ-ում հրավիրվեց համաշխարհային հայկական կոնգրես:

հուլիս 21 Երևանում մահացավ ականավոր բանասեր, ակադեմիկոս Ստեփան Մալխասյանը: (Ծնվ. 1857թ.-ին):

օգոստոս 23 Կազմակերպվում է ԽՍՀՄ Կենտկոմին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալը-Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ինստիտուտը:

1949 մարտ 16 Բացվում է Հայաստանի թատերական ընկերության առաջին համագումարը:

հունիս 27 Հայաստանի խորհրդային ճարտարապետների և երկրորդ համագումարի բացումը:

նոյեմբեր 11 Գործարկվեց Սևանի ստորերկրյա հիդրոէլեկտրակայանը:

1950 փետրվար 10 Թիֆլիսում մահացավ ականավոր կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը: (Ծնվ. 1879թ.-ին):

նոյեմբեր 6 Խ. Աբովյանի արձանի հանդիսավոր բացումը Երևանում:

1951 փետրվար 25 Հայկական ԽՍՀ երրորդ գումարման Գերագույն խորհրդի ընտրությունները:

օգոստոս 12 Երևանում մահացավ ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ Երվանդ Շահազիզը: (Ծնվ. 1856թ.-ին):

նոյեմբեր 29 Վախճանվեց հայ գրող, մանկավարժ, հասարակական գործիչ Լևոն Շանթը: (Ծնվ. 1869թ.-ին):

1952 հունվար 17 ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագիրը Երևանի, Կիրովականի և Լենինականի օկրուգներ ստեղծելու մասին:

փետրվար 4 Երևանում մահացավ ականավոր պատմաբան, ակադեմիկոս Հակոբ Մանանդյանը: (Ծնվ. 1873թ.-ին):

հոկտեմբեր 5 Բացվում է ԽՍՀՄ XIX համագումարը, որն ընդունում է ԽՍՀՄ զարգացման 1951-1955 թվականների հինգերորդ հնգամյա պլանի դիրեկտիվները:

(Շարունակելի)

**ԿՈՐՂՈՐԲԱ ՆԱՀԱՆԳԸ ԱՊՐԻԼԻ 24-Ը
ՃԱՆԱԶԵԼ Է ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ**

Արգենտինայի Կորդոբա նահանգի օրենսդիր մարմինը միաձայն ընդունել է օրինագիծ, որով ամեն տարվա ապրիլի 24-ը սահմանվում է որպես Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ իրականացված ցեղասպանության հիշատակման օր: Օրինագծում մասնավորապես նշված է, որ «Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում հայ ժողովրդի հանդեպ Օսմանյան կայսրության եւ Թուրքիայի կառավարության իրականացրած դաժանությունները կոչվում են Հայոց ցեղասպանություն»:

Օրինագծի հեղինակը՝ «Միավորում Կորդոբայի համար» խմբակցությունը ներկայացնող պատգամավոր Ալեխանդրա Վիգոն նախատեսել է նաեւ նահանգի դպրոցներում անցկացնել Հայոց ցեղասպանության մասին դասընթացներ:

Օրենքն ուժի մեջ կմտնի հաստատվելուց հետո 10-օրյա ժամկետում:

**ԱԼԻԵՎ-ՇԻՐԱԿ ՓՈԽԱԴԱՐՁ
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2007 Թ.**

Ադրբեջանի նախագահ Իլիհան Ալիևը 2007 թ. հունվարին Ֆրանսիայի նախագահ ժակ Շիրակի հրավերով պատրաստվում է այցելել Ֆրանսիա: Ադրբեջանական լրատվամիջոցների փոխանցմամբ, Ֆրանսիայի նախագահը պատասխան այցով Ադրբեջանում կլինի 2007 թ. առաջին քառորդում: Հիշեցնենք, որ սեպտեմբերի վերջերին պետական պաշտոնական այցով ժակ Շիրակը կայցելի Հայաստան:

**Եվրախորհուրդը դեմ է Մերձդնեստրի
անկախության վերաբերյալ հանրաքվեի
անցկացմանը**

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Անկախության հանրաքվեն, որը նախատեսվում է սեպտեմբերի 17-ին անցկացնել Մոլդովայի մերձդնեստրյան շրջանում, ոչ մի օրինական ուժ չունի: Այս հայտարարությամբ չորեքշաբթի օրը հանդես է եկել Եվրախորհրդի գլխավոր քարտուղար Թերի Դեիսը: Փաստաթղթում նշվում է, որ օրինական ուժ ունեցող հանրաքվեից առաջ անհրաժեշտ է հասնել

քաղաքական համաձայնության եւ ուշադրության առնել քվեարկողների ազատ կամարտահայտման հարցի վերաբերյալ Եվրախորհրդի ընդունած նվազագույն ժողովրդավարական չափորոշիչները: Եվրախորհուրդը պաշտպանում է Մոլդովայի տարածքային ամբողջականությունը եւ կոչ է անում վերսկսել բանակցային գործընթացը, նշել է Դեիսը Եվրախորհրդում Մոլդովայի նոր ներկայացուցիչ Անդրեյ Նեգուտայի հետ կայացած հանդիպումից հետո:

**ՊԱՐԳԵՎՆԵՐ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ
ՀՈՉԱԿՄԱՆ 15-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**



ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հրամանագրով «Սուրբ Մեսրոպ Մաշտոց»-ի շքանշան է շնորհվել Ջերարդ Գաֆեսճյանին եւ Էդուարդո Էռնեսկյանին՝ Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-րդ տարեդարձի կապակցությամբ, հայրենիքին մատուցած նշանակալի ծառայությունների համար:

Դիվանագիտության ասպարեզում նշանակալի ծառայությունների համար «Մխիթար Գոշ»-ի մեդալով են պարգևատրվել Չինաստանում եւ Գերմանիայում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպաններ Վասիլի Ղազարյանը եւ Կարինե Ղազինյանը: Նախագահի մեկ այլ հրամանագրով ՀՀ արտգործնախարարության սփյուռքի հետ կապերի գործակալության պետ Ջիվան Մովսիսյանին շնորհվել է Հայաստանի արտակարգ դեսպանորդ եւ լիազոր նախարարի դիվանագիտական աստիճան:

ԻՏԱԼՈՒՅԻ ԼԵՈՆԱԳՆԱՑ Է ՉՈՐԿԵԼ ԱՐԱՐԱՏԻ ԼԱՆՁԻՆ

ԱՆԿԱՐԱ, ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ: Հինգշաբթի օրը իտալացի մի կին-լեռնագնաց գոհվել է Արարատի գազաթից իջնելիս, մեկ այլ լեռնագնաց անհետ կորել է:

Թուրքիայի Ադրի մահանգի իշխանությունները «Անադոլու» գործակալությանը հայտնել են, թե լեռնագնացը, որի ինքնությունը դեռ չի պարզվել, 10 այլ լեռնագնացների հետ հինգշաբթի օրը հասել էր Արարատի գազաթը (5136 մետր): Իջնելիս՝ 4200 մետր բարձրության վրա, խուճբը հայտնվել է ձնաբքի կենտրոնում:

Կին-լեռնագնացը ընկել է անդունդը, իսկ երկրորդ լեռնագնացը, որի մասին տեղեկություններ չեն հաղորդվում, անհետ կորել է: Լեռնագնացները բջջային հեռախոսով կապվել են մահանգի իշխանությունների հետ, որոնք էլ կազմակերպել են փրկարարական աշխատանքները:

Ըստ գործակալության, մահանգի իշխանությունները տեղեկացված չեն եղել լեռնագնացների արշավախմբի մասին:

Արարատ լեռան հիմնական մասը փակ ռազմական գոտի է, եւ լեռնագնացները պարտավոր էին ստանալ իշխանությունների թույլտվությունը՝ լեռը բարձրանալու համար:

ԱՄՆ Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը հաստատել է ՀՀ-ում ԱՄՆ նոր դեսպան Ռիչարդ Յոզվանդի թեկնածությունը

ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆԴՐԵՍ: ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովն այսօր երեկոյան հաստատել է Հայաստանում ԱՄՆ նոր դեսպանի պաշտոնում Ռիչարդ Յոզվանդի թեկնածությունը:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրեց ԱՄՆ Հայ դատի հանձնախմբի լրատվության պատասխանատու Էլիզաբեթ Չուլջյանը, բավական բուռն քննարկումներից հետո, ձայների 13 կողմ, 5 դեմ հարաբերակցությամբ հանձնաժողովը հաստատել է Ռ. Յոզվանդի թեկնածությունը:

Սենատորները դեսպանի թեկնածուին բազմաթիվ հարցեր են տվել, հատկապես՝ կապված Հայոց ցեղասպանության հետ: Է. Չուլջյանը նշեց նաեւ, որ չնայած հանձնաժողովը հաստատել է Ռ. Յոզվանդի

թեկնածությունը, այնուամենայնիվ, հարցը վերջնականապես ավարտված չէ: «Այս նշանակումը պետք է վավերացվի նաեւ Սենատի կողմից, եւ քանի որ հարցը շատ վիճարկելի է, ապա դեսպանի պաշտոնում նրա վերահաստատումը հնարավոր է նաեւ ձգձգվի», - նկատեց Է. Չուլջյանը:

ՄԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԽԱՐԱԳՅԱՆ



Երկարատեւ հիվանդությունից հետո, 75 տարեկան հասակում կյանքից հեռացավ Մարատ Ալեքսանդրի Խարազյանը: Նրա անունը անբաժանելիորեն կապված է 1960-80-ական թվականների հայկական մշակույթի հետ:

Մ. Խարազյանը ծնվել է 1931թ. հոկտեմբերի 10-ին Թբիլիսիում: 1953 թվականին նա գերազանցության դիպլոմով ավարտում է Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետը, իսկ 1954թ.՝ Մ. Լոմոնոսովի անվ. Մոսկվայի պետական համալսարանի հասարակական գիտությունների դասախոսների պատրաստման կուրսերը:

Աշխատանքային գործունեությունը սկսել է 1954թ.՝ Երեւանի մի շարք միջնակարգ դպրոցներում դասավանդել է պատմություն, հայ ժողովրդի պատմություն եւ աշխարհագրություն: 1956-58թթ. աշխատել է «Կոմունիստ», հանրապետական թերթի խմբագրությունում որպես գրական բաժնի աշխատակից:

1958թ. Մ. Խարազյանը տեղափոխվում է Հայաստանի Կոմկուսի ԿԿ, որտեղ զբաղեցրել է տեղեկատվության գծով հրահանգչի, ԿԿ առաջին եւ երկրորդ քարտուղարների օգնականի, բաժնի պետի տեղակալի պաշտոնները:

1966-70թթ. նա անցել է պատասխանատու դիվանագիտական աշխատանքի: Լինելով Ֆրանսիայում ԽՍՀՄ դեսպանության երկրորդ, ապա առաջին քարտուղար, Մ. Խարազյանը մեծ ներդրում ունի սովետա-ֆրանսիական մշակութային կապերի զարգացման, Ֆրանսիայի հայ համայնքի հետ հարաբերությունների խորացման գործում: Նա ակտիվորեն մասնակցել է Փարիզի Լուվրի թանգարանում կազմակերպված «Հայաստանի արվեստը. Ուրարտուից մեր օրերը», մեծ ցուցահանդեսի կազմակերպմանը:

Ավելի քան 20 տարի, 1971-1992թթ. նա անընդմեջ զբաղեցրել է Հայաստանի մշակույթի նախարարի առաջին տեղակալի պաշտոնը: Այդ տարիները նշանավորվեցին տասնյակ երկրների տարբեր քաղաքներում հանրապետության ստեղծագործական կոլեկտիվների բազմաթիվ հյուրախաղերով եւ հայ նկարիչների ցուցահանդեսներով, ընդարձակվեց թանգարանների եւ գրադարանների գործունեությունը:

Վերջին տարիներին Մ. Խարազյանը ապրում էր Փարիզում, որտեղ զբաղվում էր գիտական աշխատանքով, արդյունավետ աշխատելով ֆրանսիական արխիվներում: Հրատարակել է «Հայասիրաց շարժումը Ֆրանսիայում 19-րդ դարի վերջին- 20-րդ դարի սկզբին», թեմայով հետաքրքիր մի աշխատություն, ինչպես նաեւ մի շարք հոդվածներ գիտական պարբերականներում:

Նա մեծ մտավորական էր եւ ճանաչված գործիչ:

Մարատ Ալեքսանդրի Խարազյանի լուսավոր հիշատակը կմնա նրանց սրտում, ով ճանաչում եւ աշխատել էր նրա հետ:

Մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարություն

Զիլիի նախագահը եւ դեսպան Վլ. Կարմիրշալյանը կարելուրել են Հայաստանի եւ Զիլիի միջեւ իրավապայմանագրային հիմքի ստեղծման անհրաժեշտությունը

ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Արգենտինայում, Ուրուգվայում եւ Զիլիում ՀՀ դեսպան Վլադիմիր Կարմիրշալյանը (նստավայրը՝ Բուենոս Այրես) սեպտեմբերի 5-ին իր հավատարմագրերն է հանձնել Զիլիի Հանրապետության նախագահ տիկին Միշել

Բաշելետին՝ ստանձնելով այդ երկրում ՀՀ դեսպանի պարտականությունները:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչությունից, հավատարմագրերի հանձնման պաշտոնական արարողությունից հետո կայացած առանձնագրույցի ընթացքում, որին ներկա է եղել նաեւ Զիլիի փոխարտգործնախարար Ալբերտո Վան Կլավերեն, դեսպան Կարմիրշալյանը ներկայացրել է Հայաստան-Լատինական Ամերիկա համագործակցության հեռանկարները՝ ընդգծելով, որ, ի տարբերություն Արգենտինայի եւ Ուրուգվայի, Զիլիի հետ հարաբերությունները դեռ ձեւավորման փուլում են: Նա առաջարկել է անհապաղ ձեռնամուխ լինել իրավական դաշտի ստեղծմանը՝ կարելուրելով առաջին հերթին քաղաքական, տնտեսական եւ մշակութային ոլորտներում համաձայնագրերի մշակումը եւ ստորագրումը:

Զիլիի նախագահը նույնպես կարելուրել է իրավապայմանագրային հիմքի ստեղծման անհրաժեշտությունը եւ առաջարկել երկու երկրների արտաքին գործերի նախարարությունների միջեւ համագործակցության մասին փաստաթուղթ ստորագրել, ինչը հնարավորություն կընձեռի արտաքին գերատեսչությունների միջոցով այլ ոլորտներում համաձայնագրերի նախապատրաստման եւ համաձայնեցման համար:

Նախագահ Բաշելետը հատուկ նշել է, որ Հարավային Կովկասի տարածաշրջանից միայն Հայաստանն է իր դեսպանին հավատարմագրել Զիլիում: Նա հույս է հայտնել, որ մինչեւ իր պաշտոնավարման ավարտը հնարավորություն կունենա այցելել Հայաստան:

Թուրքիան նոտա է հղել Անկարայում հավատարմագրված ԵՄ երկրների դեսպանություններին

ԱՆԿԱՐԱ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիայի ԵՄ անդամակցության հարցում Անկարայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը նախապայման դարձնելու վերաբերյալ Եվրախորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ընդունված որոշման հետ կապված Թուրքիան բողոքի նոտա է հղել Անկարայում հավատարմագրված Եվրամիության երկրների դեսպանություններին: Ըստ թուրքական «Հուրիեթի», նոտայում անհանգստություն է հայտնվում հայերին, պոստոսյան հույներին եւ ասորիներին ցեղասպանելու մասին զեկույցում եղած պնդումների վերաբերյալ եւ ասվում է, որ «նման անհիմն եւ պատմական փաստերից հեռու պնդումներն անհասկանալի են դեմոկրատական օրենքներով ապրող թուրքերին»: Դիվանագիտական աղբյուրները հայտնել են, որ

թեև զեկույցը ԵՄ մեջ «իրավական պարտադրականություն չունի», սակայն, այն անդրադարձնում է ԵՄ ներսում ներկայիս տրամադրությունները եւ կարող է բացասական ազդեցություն ունենալ հոկտեմբերին Թուրքիայի առաջընթացի մասին հրապարակվելիք զեկույցի բովանդակության վրա: Նշելով, որ ԵՄ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի այդ որոշումը քվեարկության պետք է դրվի ԵՄ գլխավոր խորհրդի սեպտեմբերի 25-28-ին տեղի ունենալիք նիստում, թուրքական դիվանագիտական աղբյուրները հայտնել են, որ մինչ այդ մնացած ժամանակաշրջանում պետք է անհրաժեշտ ձեռնարկումներ կատարել՝ այն Թուրքիայի օգտին ուղղելու համար:

Թերթը գրել է, որ ԵՄ գլխավոր խորհրդում զեկույցի նման բովանդակությամբ ընդունումը կանխելու համար Թուրքիան դիվանագիտական «հարձակում» կսկսի ԵՄ անդամ երկրների դեսպանությունների, իսկ արտաքին գործերի նախարար Աբդուլլա Գյուլն էլ հեռախոսային «գրոհ» ԵՄ արտգործնախարարների վրա: Ըստ թերթի՝ ԵՄ արտաքին հարաբերությունների այդ որոշումը լավատեսորեն է ընդունել միայն Թուրքիայի պետնախարար եւ ԵՄ անդամակցության հարցերով գլխավոր բանագնաց Ալի Բաբաջանը, ով ասել է, որ «սխալ է Թուրքիայում ձեւավորված այն կարծիքը, թե ԵՄ-ում թուրքերին չեն ցանկանում»:

«Ամեն զեկույցում էլ կարող են լինել սխալներ, որոնք հետո ուղղվում կամ չեն ուղղվում: Կարելի էր սեփական շահերի համար թուրքերի կատարելիք բարեփոխումների աշխատանքներն են», - ասել է Բաբաջանը: Նա ասել է, որ Թուրքիայի բարեփոխումները կատարվում են ոչ թե ուրիշների ցանկության, այլ թուրք ժողովրդի եւ Թուրքիայի ապագայի համար:

օրերին է երեւում. Ահմադ Նուրիզադեն այդ նեղ օրերի ճշմարիտ բարեկամներից է: 55-ամյա բանաստեղծի ծննդավայրը Իրանի հյուսիսում գտնվող Անզալի նավահանգստային քաղաքի հայաշատ թաղամասերից մեկն է եղել, Կասպից ծովից մի քանի 100 մետր հեռավորության վրա: Այդ թաղամասում էլ նա մանկությունից է սովորել հայերեն խոսելը, հետագայում մտնելով գրականություն, սովորել նաեւ գրավորը, այդ թվում՝ գրաբարը յուրացրել Սպահանի համալսարանում:

Նա այնքան է կատարելագործվել հայերենում, որ պարսկերենին զուգահեռ գրում է նաեւ հայերեն, լույս է ընծայել բանաստեղծությունների ժողովածու: Նա այսօր համարվում է պարսկերենով հայագիտության հիմնադիրը Իրանում, իսկ շատ սիրված «Մասիսը սար չէ» պոեմը մուտք է գործել հայկական դասագրքեր: Նա մեր պոեզիային նվիրված 10-ից ավելի թարգմանական գրքերի հեղինակ է եւ իրեն անվանում է «հայ ժողովրդի պարսկախոս գավակը»:

Գրական փայլուն գործունեության համար բանաստեղծն արժանացել է «Կարպիս Փափազյան», «Մովսես Խորենացի», «Կանթեղ» մրցանակների: Հանդիսության ներկաները ջերմորեն ողջունեցին նաեւ բանաստեղծի տիկնոջն ու 12-ամյա դստերը, որոնցից առաջինը Թեհրանում համալսարանական դասախոս է եւ իր ծրագրում ունի նաեւ հայ մշակույթի պրոպագանդումը ուսանողության շրջանում:

Ջերմ ելութներ ունեցան ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության մշակութային խորհրդական Ռեզա Աթուֆին, բանաստեղծ Արամայիս Սահակյանը, արձակագիր Հրաչյա Սաթեւոսյանը, Թեհրանի «Ալիք» օրաթերթի խմբագիր Նորայր Էլսարյանը, հնչեցին բանաստեղծի պոետական էջերը:

Ահմադ Նուրիզադեն շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար, ասաց, որ այսուհետեւ եւս իր ջանքերը կուղղի իր երկրում հայ գրականության, հայ մշակույթի տարածմանը:

Գրողների միությունում նշվեց Ահմադ Նուրիզադեի գրական գործունեության 40-ամյակը

ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Եթե այսօր իմ երկրում հայկական մշակույթը ավելի լավ են ծանաչում, քան մեկ միլիարդ 200 միլիոն բնակչություն ունեցող Չինաստանինը, ապա այդ գործում «մեղավորներից» մեկն էլ ես եմ»: այս խոսքերը պատկանում են իրանցի բանաստեղծ Ահմադ Նուրիզադեին, որի գրական գործունեության 40-ամյակն այսօր հանդիսավորապես նշվեց Հայաստանի գրողների միությունում:

Դիմելով հանդիսությանը ներկա հյուրին, որը Հայաստան է ժամանել կնոջ եւ դստեր հետ, ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանը ասաց, որ մեր ժողովուրդը միշտ էլ բարեկամներ ունեցել է, որոնք հայերին ներկայացրել են իրենց ժողովուրդներին: Վերջին տարիներին նոսրացել են նրանց շարքերը, բայց ինչպես հայտնի է՝ ճշմարիտ բարեկամը նեղ

Աշխարհահռչակ շանսոնիե Շ. Ազնավուրի եւ ֆրանսիացի երգիչների մասնակցությամբ համերգով կազդարարվի Ֆրանսիայում Հայաստանի տարվա միջոցառումների մեկնարկը

ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հանրապետության հրապարակում սեպտեմբերի 30-ին աշխարհահռչակ շանսոնիե, մեծ հայորդի Շառլ Ազնավուրի եւ ֆրանսիական երգարվեստի ներկայացուցիչների մասնակցությամբ համերգով կազդարարվի Ֆրանսիայում Հայաստանի տարվա միջոցառումների մեկնարկը: «Ազգային տարի» պետական ոչ-առևտրային

կազմակերպությունից տեղեկացանք, որ ֆրանսիացի երգիչների ցանկը ճշտվում է, եւ չի բացառվում, որ համերգին կմասնակցի նաեւ Պատրիսիա Կասսը: Համերգի տոմսը նստել ցանկացողների համար 40-120 հազար դրամ կարժենա, սակայն բաց երկնքի տակ համերգն ունկնդրել կարող են բոլոր ցանկացողները:

Հանրապետության մարզերում բազմաբնակարան շենքերի բնակարանների գներն ավելի արագ են աճում, քան Երեւանում

ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երեւանում 2006թ-ի առաջին կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գինը 2005թ-ի երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 11,5%-ով, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 32,9%-ով: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեից, 2006թ. առաջին կիսամյակում Երեւանում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առքուվաճառքների առավելագույն եւ նվազագույն գինը՝ 1քմ մակերեսի հաշվարկով, տատանվել է 58 500-540100 դրամի սահմաններում:

Նշված ժամանակահատվածում հանրապետության մարզերում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 քմ մակերեսի շուկայական միջին գինը 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել է 15,4%-ով, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 45,5%-ով: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 60 560 գործարք, ինչը 2005թ. առաջին կիսամյակի համեմատ ավելի է 10,3%-ով, իսկ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել է 10,5%-ով:

Անշարժ գույքի նկատմամբ իրականացված 23 638 օտարման գործարքների 89,9%-ը կազմել են առուվաճառքները: Երեւանում անշարժ գույքի 7 387 առուվաճառքի գործարքների 63,3%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Մայրաքաղաքում 2005թ. առաջին կիսամյակի համեմատ նշված բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 6,3%-ով, իսկ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 2%-ով: Նույն ժամանակահատվածում հանրապետության մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 2 567 բնակարան, որոնց քանակը 2005թ. առաջին կիսամյակի համեմատ աճել է 9,6%-ով, իսկ 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ նվազել՝ 5,5%-ով:

Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում հանրապետությունում արձանագրվել է

անհատական բնակելի տների առուվաճառքի 2 569 գործարք, որից 593-ը Երեւանում, 1976-ը՝ մարզերում: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ, այս տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 13,7%-ով, ընդ որում՝ Երեւանում այս ցուցանիշը նվազել է 0,8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ աճել 18,9%-ով: 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ, վերջիններիս առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 8,9%-ով, ընդ որում Երեւանում՝ 16,2%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 6,4%-ով: Մայրաքաղաքում 2006թ. առաջին կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) 2005թ. երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 8,8%, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 29,9%-ով:

Միաժամանակ, Երեւանի համայնքներում շինության 250 քմ եւ տնամերձի 400քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը, տատանվել է 40500-900200 դրամի սահմաններում: Նշված ժամանակահատվածում հանրապետության մարզերում անհատական բնակելի տների շինության 1 քմ մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը) նախորդ տարվա երկրորդ կիսամյակի համեմատ աճել են 11,3%-ով, իսկ 2005թ. առաջին կիսամյակի համեմատ՝ 41,2%:

2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկություններից ԱՄՆ-ի կորուստները կազմել են 500 մլրդ դոլար

ՎԱՇԻՆԳՏՈՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: 2001 թվականի սեպտեմբերի 11-ի ահաբեկություններից ԱՄՆ-ի կորուստները, ըստ ամենացածր գնահատումների, կազմել են 500 մլրդ դոլար: Այդ մասին նախագահ Ջորջ Բուշը հայտնել է զինվորական սպաների ամերիկյան ասոցիացիայի անդամների առջեւ երեքշաբթի օրը Վաշինգտոնում արտասանած իր ճառում:

Հիշեցնելով, որ, Ուսամա բեն Լադենի գնահատմամբ, այդ ահաբեկությունների կազմակերպումն ու իրագործումը «Ալ Ղաիդա»-ի վրա նստել է 500 հազար դոլար, Բուշը հայտնել է, որ «Ալ Ղաիդա»-ի յուրաքանչյուր դոլարը Ամերիկայի համար նշանակում է 50 մլն դոլար:

«Այն բանից հինգ տարի անց, երբ մեր երկիրը հարձակման ենթարկվեց, վտանգը պահպանվում է»,-ասել է Բուշը: ԱՄՆ-ի նախագահի ելույթի ժամանակ ներկա են եղել արտասահմանյան այն երկրների ղեսպանները, որոնք վերջին տարիներին ենթարկվել են միջազգային ահաբեկիչների հարձակումներին:

Իր ճառում Սպիտակ տան ղեկավարը

հայտարարել է, որ իսլամական ահաբեկիչները «ատելության գաղափարախոսություն» են քարոզում՝ ձգտելով Մերձավոր արեւելքում ստեղծել «միավորված ամբողջատիրական իսլամական պետություն», եւ որ ահաբեկիչների հետ հնարավոր չեն փոխզիջումներ: «Հիմարություն կլինի կարծել, թե նրանց հետ կարելի է բանակցություններ վարել», - հայտարարել է ԱՄՆ-ի նախագահը, որն ընդամին ընդգծել է, թե ահաբեկչության դեմ պայքարում ԱՄՆ-ը մտադիր է հասնել լիակատար հաղթանակի:

ԿՈՄՊՅՈՒՏԵՐԸ ԵՎ ԿԱՂԻՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Գ. Ա. ՎԱՅՆՅԱՆ

*Տեխնիկական գիտությունների թեկնածու
Լ. Ի. ՉԵՄԵՐԻՍ*

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու

ՍՄԿԿ XXVII համագումարում, կուսակցության հետագա որոշումներում, XIX Համամիութենական կուսկոնֆերանսում բարձրացված դեմոկրատիայի զարգացման հարցերը ստիպում են նորովի նայել կուսակցական, սովետական եւ տնտեսական մարմինների ղեկավար օղակի ընտրության պրոբլեմներին:

Գործնականում ղեկավարները նշանակվում են հիմնականում «վերեւից»: Ներկայումս ակտիվորեն տարածվող մյուս տարբերակը ղեկավարներին «ներքեւից» առաջ քաշելն է: Մեր կարծիքով երկու տարբերակն էլ ունեն մի ընդհանուր թերություն՝ միակողմանիություն: Առաջին դեպքում սահմանափակվում է կոլեկտիվի մասնակցությունը, երկրորդում՝ վարչակառավարչական ապարատին, հատկապես՝ վերադասին: Նպատակահարմար է ղեկավար աշխատանքի թեկնածուներին առաջ քաշել երկու կողմից: Այդ դեպքում սոցիոլոգի խնդիրն է նախապես գնահատել կադրերը եւ հանձնարարականներ տալ նրանց որպես թեկնածուներ առաջ քաշելու հնարավորության վերաբերյալ:

Ընտրություններից առաջ կադրերի գնահատման անհրաժեշտությունը թելադրվում է հետեւյալ նկատառումներով: Կոլեկտիվը, որպես օրենք, ղեկավարելու է առաջ քաշում այն մարդկանց, ովքեր, նրանց կարծիքով, ընդունակ են պաշտպանել կոլեկտիվի շահերը, օգնել նրան իրագործել արտադրական խնդիրները եւ բավարարել մարդկանց պահանջումները, այսինքն նրանց, ուն կոլեկտիվում լավ գիտեն եւ ուն հավատում են: Այստեղ նշանակություն ունի ղեկավարի թեկնածուների ընտրության մեկ չափանիշ, իսկ ադմինիստրացիան կարող է գնահատել նրանց այլ չափանիշով: Սովորաբար

ադմինիստրացիան առաջարկում է այն թեկնածուներին, որոնք առաջին հերթին ընդունակ են ապահովել արտադրական հանձնարարությունների կատարումը, իսկ դա հիմնականում պահանջում է պրոֆեսիոնալ զրագիտություն: Այդպիսի մոտեցման դեպքում կարող է այնպես ստացվել, որ ղեկավարը չներգրվի կոլեկտիվում: Այդ պատճառով նախքան ղեկավարի նշանակումը կամ ընտրությունները, պետք է անցկացնել կադրերի նախնական գնահատում՝ գտնելու համար ղեկավար պաշտոնի թեկնածուներին օպտիմալ տարբերակը: Մեր կողմից առաջարկվող մոտեցման էությունն այն է, որ թեկնածուներին լավ ճանաչող աշխատողներին առաջարկվում է գնահատել նրանց զործնական եւ անձնական ունակություններն ըստ որոշ, նախապես կազմված «հատկությունների»* հավաքածուի, համապատասխան սյունակների առջև նշելով այն թեկնածուին (կամ նրա հերթական համարը), որին տրվում է նախապատվությունը: Ասենք, մարդկանց կարծիքով «գործարարություն» հատկությունն ունեն, օրինակ, Ա եւ Բ թեկնածուները՝ ցուցակում այդ հատկության դիմաց դրվում են նրանց ազգանունները կամ համարները: «Բարեխիղճ» հատկություն ունեն, օրինակ, Բ եւ Գ թեկնածուները՝ նրանց գրանցում են «հատկությունների» առաջարկվող հավաքածուի համապատասխան տողում:

Կոմպյուտերների օգնությամբ դժվար չէ հավաքել «ծայները» եւ ամեն մի թեկնածության համար ստանալով դրանց բաշխումը, կառուցել «դիմանկարներ» ղեկավար պոստի համար յուրաքանչյուր թեկնածուի շանսերը գնահատելու նպատակով:

Հասարակական կարծիքի հիման վրա կադրերի գնահատումը թույլ է տալիս աշխատողների օբյեկտիվ բնութագրեր եւ ընդհանրապես կադրային քաղաքականության ձեւավորման օբյեկտիվ չափանիշներ ստանալ: Բացառվում է նույնիսկ հարցման արդյունքները վերլուծող սոցիոլոգի սուբյեկտիվ միջամտությունը, քանի որ գնահատվում են բոլոր աշխատողները եւ ռեսպոնդենտները ինչ-որ որոշակի թեկնածուների կողմնորոշված չեն:

Հարկ է նշել, որ մեր առաջարկած մեթոդիկական կարող է օգտագործվել աշխատողների ցանկացած կատեգորիայի գնահատման համար. ղեկավարներ, մասնագետներ, գիտաշխատողներ: Կադրերի որակական բնութագիր ստանալու համար, որ թույլ է տալիս բոլոր ռանգերի եւ կատեգորիաների (կուսակցական, սովետական եւ տնտեսական) ղեկավարների ընտրության համար բազա ստեղծել, կադրերի վերաբաշխման եւ դրանց ճիշտ օգտագործման համար, մի խոսքով՝ ձեռնարկություն, կազմակերպությունների, ինստիտուտի կադրային քաղաքականության ձեւավորման համար անհրաժեշտ է ունենալ գիտատեխնիկական առաջընթացով եւ

կառավարմամբ զբաղվող ղեկավարների ու մասնագետների բնութագրերի կոմպյուտերային, գրաֆիկական պատկերները: Մեր մեթոդի փորձնական ստուգումն առաջին անգամ կատարվել է 1987 թ. «Լույս» միավորումում: Որպես օրինակ բերենք 1-6 արտադրամասում ստացված արդյունքները, որտեղ գնահատվում էին արտադրամասի պետը, նրա երկու տեղակալները, երկու հերթափոխի պետեր, ինչպես նաև կուսկոմի եւ արհկոմի ներկայացուցիչները: Հասարակական (կոլեկտիվ) կարծիքի հիման վրա ստացված «ծայների» բաշխումը բերված է 1a նկարում: Ակնհայտ է, որ գործարանի ադմինիստրացիայի ընտրությունը չի համընկնում արտադրամասի կոլեկտիվի կարծիքի հետ. ոչ ձեւական առաջնորդն է 1 հերթափոխի պետը, որը ստացավ 11 առավելագույն գնահատական, մինչդեռ արտադրամասի պետը՝ ընդամենը 8, մնացածներն ավելի քիչ: Այսպիսով, առաջանում է արտադրամասում կադրերի համապատասխան տեղափոխության անհրաժեշտություն, որի շնորհիվ հիերարխիան դառնում է ավելի հետեւողական եւ տրամաբանական (նկար 1b): Ղեկավարների որակական մագարդակի գծանկարային պատկերումը համապատասխան «դիմանկարների» տեսքով թույլ է տալիս որոշել, թե որքանով է ճիշտ եւ հիմնավորված կադրերի առաջարկվող կազմակերպական վերակառուցումը, ինչպես նաև, թե որ ղեկավարն է հարկավոր տվյալ արտադրամասին եւ ղեկավար աշխատանքի համար ինչպիսի հատկություններ նա պետք է ունենա: «Դիմանկարների» օրինակները բերված են 2-րդ նկարում: Դրանցից յուրաքանչյուրը բնութագրվում է «որակյալության» իր մակարդակով, որը ներկայացված է աշխատանքային կոլեկտիվի գործերում ղեկավարի «օգտակարության» աստճանն արտացոլող համապատասխան K գործակցով: Անձնական գործակիցների համեմատումը ցույց տվեց, որ այն ղեկավարները, որոնց «դիմանկարները» բերված են 2 a, b նկարներում միմյանցից տարբերվում են ոչ միայն ամբողջությամբ, այլ նաև բնավորության առանձին հատկություններով: Այսպես, երկրորդ լիդերի՝ 1-ին հերթափոխի պետի «օգտակար» մակերեսն ավելի մեծ է, այսինքն ավելի շատ են կոլեկտիվի կողմից դրականորեն գնահատված հատկությունները: Նա հավասարակշռված, հանգիստ մարդ է, ինչի մասին վկայում է հատկությունների «անկումների» աննշան քանակը: Առաջինների շարքը նրան հատկացնում են այնպիսի ունակություններն, ինչպիսիք են գործի, իմացությունը, կազմակերպվածությունը, պատասխանատվությունը (վերոհիշյալ ցուցակում համապատասխանաբար 8, 7, 9), վճռականությունը, ինքնատիրապետումը (12, 15), պանջկոտությունն իր նկատմամբ, մարդկանց հասկանալը, կարգապահությունը եւ բարյացակամությունը (24, 29, 30, 32): Այս հատկությունները դուր են գալիս

մարդկանց, եւ մի կարգ բարձր են գնահատվում ղեկավարի պրոֆեսիոնալ արժեքներից: Այսպիսով, կոլեկտիվի կողմից ղեկավարի ընտրման չափանիշ հանդես են գալիս մարդկային հարաբերությունները, բայց ոչ ի վնաս նրա պրոֆեսիոնալ ունակությունների: Կադրերի գծանկարային դիմանկարների կազմումը թույլ է տալիս ստանալ ղեկավարության վիճակի օբյեկտիվ պատկերը եւ որոշել կառավարչական կադրերի ընտրության չափանիշը գործարանի ադմինիստրացիայի կողմից: Մեր դեպքում պարզվեց, որ առավելապես արտահայտված են այնպիսի հատկություններ, ինչպիսիք են շահագրգռվածությունն արտադրության վիճակով, գործարարությունը, պրոֆեսիոնալ պատրաստվածությունը: Դրա փոխարեն կազմակերպչական ունակություններով արտադրամասի ղեկավարներն աչքի են ընկնում ամենից քիչ (բացի ոչ ձեւական լիդերից): Այստեղից հետեւում է, որ գործարանի ադմինիստրացիայի համար ստորաբաժանման ղեկավարների ընտրության չափանիշներ են մասնագետի պրոֆեսիոնալ ունակությունները: Տվյալ դեպքում հաշվի չի առնվում այն փաստը, որ բարձր պրոֆեսիոնալ պատրաստվածության դեպքում ղեկավարը կարող է չկարողանալ նորմալ մթնոլորտ ստեղծել կոլեկտիվում եւ մարդկանց կազմակերպել արտադրական խնդիրների կատարման համար: Կարելի է նշել, որ գծանկարային դիմանկարումը չույլ է տալիս տեղեկություններ ստանալ նաև այն հատկությունների մասին, որոնց վրա անհրաժեշտ է աշխատել: Օրինակ, 1-ին հերթափոխի պետի «դիմանկարը» նշում է վարքում եւ բնավորությունում նրա այնպիսի թերությունները ինչպիսիք են անփութությունը, խոսքի եւ գործի անհամապատասխանությունը եւ այլն: Այսպիսով, անձնական գրաֆիկական կոմպյուտերների կիրառումը նոր հնարավորություններ է բացում ադմինիստրացիայի, կադրերի բաժինների եւ բոլոր մակարդակների ղեկավարների աշխատանքում, թույլ է տալիս կատարել կադրերի ռացիոնալ ընտրություն, տեղաբախշում, տեղափոխում եւ օգտագործում, ելնելով ձեռնարկության եւ իր՝ աշխատողի շահերից: Ղեկավարների վերաբերյալ կուտակված տվյալների բանկի եւ ԷՅՍ համամիութենական ցանցի հետ կապ ունեցող անձնական կոմպյուտերների օգնությամբ հնարավոր է դառնում գործնականում իրագործել պետական կադրային ծառայության ստեղծման եւ կադրային քաղաքականության անցկացման նպատակային ծրագիր:

* Աշխատանքում օգտագործված է պրոֆ. Լ. Ա. Ռիմանսկու (Լենինգրադ) մշակված գործնական եւ անձնական բնութագրերի ցանկը: Հետազոտման օբյեկտից կախված ցանկը կարող է փոփոխվել: